ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

04-ը նոյեմբերի 2023թ.

Շնորհավորական ուղերձ Սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ

Սոցիալական աշխատողի մասնագիտական օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ ոլորտի բոլոր ներկայացուցիչներին:

Սոցիալական աշխատողի հոգատար վերաբերմունքի, պարտաճանաչ գործունեության և մասնագիտական հմտությունների շնորհիվ հասարակության մեջ աստիճանաբար բարելավվում են դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիների և ընտանիքների կենսապայմանները: Սոցիալական աշխատանքի հիմքում մարդասիրությունն ու բարեհոգությունն է. հենց այս որակների շնորհիվ համայնքային սոցիալական աշխատողներն իրենց ընթացիկ գործերին զուգահեռ, բարեխղճորեն, շաբաթներ շարունակ իրականացնում են Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների ընդունման, հաշվառման, կարիքների գնահատման ծավալուն աշխատանքը:

Մասնագիտական օրվա առթիվ առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյանի համայնքապետարանի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժնի, «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոնի», Միասնական սոցիալական ծառայության Աբովյանի տարածքային կենտրոնի աշխատակիցներին և համայնքում սոցիալական աշխատանք իրականացնող բոլոր մասնագետներին, ովքեր բարեխղճորեն աշխատում են խոցելի իրավիճակում գտնվող անձանց տարաբնույթ խնդիրները հաղթահարելու ուղղությամբ:

Հարգելի՛ սոցիալական աշխատողներ.

Անչափ կարևոր և գնահատելի է ձեր կարեկից, սրտացավ ու պատասխանատու գործունեությունը, մաղթում եմ բոլորիդ ուժ, եռանդ, հաջողություններ ձեր կատարած շնորհակալ աշխատանքում և անձնական կյանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ